500 Այսօր դու, քո՛ւյր իմ սիրելի,

1. Այսօր դու, քո՛ւյր իմ սիրելի,
Հարսնացուն ես քո փեսայի,
Ինչպես եկեղեցին այսօր
Դարձել է հարսը Հիսուսի:
Միշտ արդար ու սուրբ դու քայլիր,
Քո փեսային հնազանդվի՛ր,
Ինչպես եկեղեցին այսօր
Հնազանդվում է Հիսուսին:

2. Ընտրել եք դուք մի ճանապարհ,
Որ երկուսով սիրով քայլեք,
Եվ ընտրել եք մի ճանապարհ,
Որ Հիսուսին դուք նմանվեք:
Տերը լինի միշտ ձեր կյանքում,
Եվ ձեր անձերը՝ Հիսուսում,
Ձեր աչքերը Նրան հառեք
Ու Հիսուսով սիրով եղեք:

3. Հավատ, հույս, սեր և միություն
Թող որ լինեն միշտ ձեր կյանքում,
Թեկուզ լինի և փորձություն,
Թող Տերը տա ձեզ հաղթություն:
Աստծով միշտ ուրախ եղեք
Եվ օրհնություններ վայելեք,
Համբերությամբ դուք սպասեք,
Որ Հիսուսին դիմավորեք: